ՀԱՐԿԱԴԻՐ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔԻ ՊԵՏԻ ՊԱՇՏՈՆԻ ՀԱԿԻՐՃ ՆԿԱՐԱԳԻՐԸ

1. **Գործառույթներ**

Բաժանմունքի պետը՝

1) Վերահսկել հարկադիր կատարման ներկայացված ակտերի կատարման գործընթացը.

2) Վերահսկել պարտապանի գույքի վրա բռնագանձում տարածելու գործընթացը՝ գույքի վրա արգելանք դնելու, սահմանափակում կիրառելու (շարժական գույքի նկատմամբ), այն առգրավելու և հարկադիր իրացնելու (աճուրդ կամ ուղղակի վաճառք) միջոցով.

3) Վերահսկել պարտապանի աշխատավարձի, կենսաթոշակի, կրթաթոշակի և այլ տեսակի եկամուտների վրա բռնագանձում տարածելու գործառույթը.

4) Վերահսկել այլ անձանց մոտ գտնվող պարտապանի դրամական միջոցների և այլ գույքի վրա բռնագանձում տարածելու գործառույթը.

5) Վերահսկել պարտապանին պատկանող բնակարանների, շենքերի և շինությունների բացման, պարտապանին պատկանող, սակայն այլ անձանց զբաղեցրած բնակարանների, շենքերի և շինությունների բացման, զննության, ինչպես նաև պարտապանին պատկանող, սակայն այլ անձանց մոտ գտնվող պարտապանի գույքի առգրավման հետ կապված կատարողական գործողությունները.

6) Իր իրավասության սահմաններում կայացնել որոշումներ, որոնք պարտադիր են բոլոր պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, պաշտոնատար անձանց, կազմակերպությունների և քաղաքացիների համար ու ենթակա են կատարման Հայաստանի Հանրապետության ամբողջ տարածքում.

7) Վերահսկել կատարողական վարույթի հարուցման և կատարողական վարույթի հետագա ընթացքի ապահովման գործընթացը՝ (ավարտ, կարճում, կասեցում և հետաձգում) օրենսդրության դրույթների համաձայն.

8) Հսկողություն իրականացնել կատարողական վարույթների արխիվացման գործընթացի նկատմամբ.

9) Իրականացնել հսկողություն կատարողական վարույթներով Բաժնի դեպոզիտ հաշվին փոխանցված դրամական միջոցների նկատմամբ, մասնավորապես՝ հետևել գումարների բաշխմանը օրենսդրության դրույթների համաձայն:

2. **Պաշտոնին ներկայացվող պահանջները**

Հարկադիր կատարման ծառայության տարածքային մարմնի բաժանմունքի պետի պաշտոնում կարող է նշանակվել այն անձը, որը զբաղեցրել է Ծառայության գլխավոր խմբի պաշտոն կամ առնվազն երկու տարի՝ առաջատար խմբի պաշտոն կամ ունի հանրային ծառայության առնվազն երկու տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ պաշտոնի անձնագրով պահանջվող աշխատանքի բնագավառում՝ երեք տարվա աշխատանքային ստաժ:

Պաշտոնին ներկայացվող մասնագիտական պահանջները սահմանված են ՀՀ փոխվարչապետի 30 հուլիսի 2020 թվականի N 461-Ն որոշմամբ: